

Արման Կիրակոսյան

Հարգարժան նախագահող,
Հարգելի գործընկերներ և հյուրեր,

Թույլ տվեք շնորհակալություն հայտնել համաժողովի կազմակերպիչներին սևծովյան թեմատիկային վերաբերող այս միջոցառման կազմակերպման համար, նախևառաջ այն պատճառով, որ դրա քննարկման հրատապությունը կասկածից վեր է և համահունչ է մեր այսօրնական մտորումներին և մտահոգություններին:

Կարծում եմ այս տարածաշրջանի կարևորության խնդիրը լայնորեն ընդունված է և ենթարկվել է բազմաթիվ ու համակողմանի քննարկումների և վերլուծությունների, սակայն հարցերի բազմազանությունը մեզ բերում է այն եզրահանգման, որ մենք դեռևս հեռու ենք վերջնական հայեցակարգեր ու դրույթներ ունենալու արդյունքից:

Այստեղ բազմիցս խոսվեց սևծովյան տարածաշրջանի անվտանգության հարցերի վերաբերյալ, նկատի առնելով համապարփակ միջազգային գործընթացների և խոշոր դերակատարների շահերի խաչաձևումը, միջինարևելյան, ետխորհրդային տարածաշրջաններում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական գործընթացների փոխազդեցությունը, եվրասիական խաչմերուկի կարգավիճակը, հաղորդակցության նոր ուղիների ու էներգակիրների տեղափոխման տարածք լինելու հանգամանքը և այլն:

Սևծովյան տարածաշրջանի ընդհանուր պատկերին նայելով առաջին հերթին այն աչքի է ընկնում հակամարտությունների առկայությամբ, մի շարք երկրների ներքին անկայունությամբ ու կոնֆլիկտածին իրավիճակներով, որոնք ներգծվում են տարածաշրջանի փոքր ու մեծ դերակատարների մրցակցային քաղաքականության մեջ: Սակայն սրա հետ մեկտեղ գործի են դրված տարածաշրջանային կազմակերպություններ, ծրագրեր և նախաձեռնություններ, որոնք իրենց նշանակությամբ որոնում են համագործակցային ձևաչափեր (BSEC, INOGATE, TRACECA, Black Sea Forum) և այլն:

Կցանկանայի կենտրոնանալ սրանցից մեկի՝ ՄՕՏՀ գործունեության վրա, որպես առավել երկարաժամկետ գործունեություն ծավալած տարածաշրջանային կազմակերպության: Արդեն 15 տարուց ավելի ինչ գործում է այս կազմակերպությունը և մշտապես ունեցել է ծանրաբեռնված օրակարգ: Բացի դրանից այն ստեղծվել է անմիջապես խորհրդային համակարգի փլուզումից հետո և օրինական հարց է ծագում թե՛ ի՞նչ ներդրում ունի այս կազմակերպությունը սևծովյան տարածաշրջանում և արդյո՞ք ՄՕՏՀ-ն հարմարված է այսօրվա խնդիրների լուծմանը:

Մեր համոզմամբ արդեն 15 տարվա գործունեության փաստը խոսում է այս կազմակերպության կենսունակության մասին, եթե հաշվի առնենք այն փաստը, որ նրա անդամներից համարյա բոլորն ունեն քաղաքական խնդիրներ միայնց հետ (ՀՀ-Ադրբեջան, ՀՀ-Թուրքիա, Վրաստան-ՌԴ, Մերթիա-Ալբանիա, Հունաստան-Թուրքիա և այլն): Մրա հետ մեկտեղ այնուամենայնիվ առկա է համագործակցությունը ՄՕՏՀ տարբեր մարմիններում՝ ICBSS, BSTDB, PABSEC, PDF: Կասկածները ՄՕՏՀ հեռանկարի վերաբերյալ սին դուրս եկան, հետևաբար պետք է ընդունել, որ գործում են շահերի մեխանիզմներ, որոնք պահպանում են այս կազմակերպությունը:

ՄՕՏՀ-ն տարածաշրջանային միակ կառույցն է, որը 1999թ. միջազգային տնտեսական համագործակցության կազմակերպության կարգավիճակ ստանալուց հետո իր գործունեությունը նպատակաուղղել է սևծովյան տնտեսական համագործակցության կարևորագույն ծրագրերի իրականացմանը:

Հայաստանի Հանրապետությունը համոզված է, որ իր 15-ամյա պատմությամբ ՄՕՏՀ-ն արդեն իսկ ստեղծել է յուրօրինակ համագործակցության փորձ տարածաշրջանի երկրների միջև կապերի ընդլայնման և հարաբերությունների բարելավման հեռանկարների համար:

Հայաստանը, հանդիսանալով ՄՕՏՀ հիմնադիր անդամ, մշտապես տարբեր առիթներով հանդես է եկել այն դիրքերից, որ կողմնակից չէ սևծովյան տարածաշրջանում տնտեսական համագործակցության գործառնությունների կրկնօրինակմանը՝ համոզված լինելով, որ ՄՕՏՀ-ն լիարժեք կատարում է իր դերը տարածաշրջանում: Միևնույն ժամանակ, կազմակերպությունն ունի ֆինանսավորման, ինչպես նաև միջազգային քաղաքականության գործընթացներում կարևոր դերակատարություն ստանձնելու խնդիրներ, որոնց հաղթահարման գործում խիստ կարևորվում է ԵՄ, ԱՊՀ, Եվրասիական տնտեսական ընկերակցության և այլ կազմակերպությունների հետ համագործակցության իրողությունը:

Հայաստանը բարձր է գնահատում ՄՕՏՀ շրջանակում իրականացվող զարգացման համատեղ ծրագրերը: Մենք մասնավորապես կարևորում ենք տարածաշրջանում տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածքների զարգացմանը վերաբերող խնդիրների հաղթահարման գործում ՄՕՏՀ ուրույն դերը: Մեծ նշանակություն տալով գործող ենթակառուցվածքների վերագործարկման ու շահագործման գործընթացներում կազմակերպության ակտիվ մասնակցությանը՝ Հայաստանի Հանրապետությունը միաժամանակ համոզմունք է հայտնում, որ ՄՕՏՀ-ն ի վիճակի է նոր թափ հաղորդելու տարածաշրջանային զարգացման գործընթացներին՝ բացառելով որևէ անդամ-երկրի մեկուսացումը:

ՄՕՏՀ-ն Հայաստանի համար կարևորվում է նաև այն բացառիկ հանգամանքով, որ կազմակերպության շրջանակում ստեղծված տնտեսական հարաբերությունների պայմաններում հնարավոր է դառնում շփվել Թուրքիայի և Ադրբեջանի հետ՝ քննարկելով նաև որոշ քաղաքական հարցեր: Բացի դրանից, դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում հնարավորություն է ընձեռնվել Թուրքիայում ունենալու ՄՕՏՀ մշտական ներկայացուցչություն, ինչը համաձայնվեք, փոխշփման որոշակի միջոց է հանդիսանում Հայաստանի և Թուրքիայի միջև՝ բնականոն հարաբերությունների բացակայության պայմաններում:

Հայաստանը կարևորում է ՄՕՏՀ-Եվրամիություն փոխգործակցության նոր ձևաչափի հաստատումը, մասնավորապես Եվրոպական նոր հարևանության քաղաքականության լույսի ներքո, ինչը Եվրոպայի նոր հարևանների համար ստեղծում է արտոնյալ պայմաններ՝ քաջալերելով տարածաշրջանային համագործակցությունը: Պետք է նշել, որ ինչպես ՄՕՏՀ, այնպես էլ ԵՄ անդամ պետությունների մոտ կան շատ տարբեր մոտեցումներ այս երկու կազմակերպությունների համագործակցության ձևերի և հեռանկարի վերաբերյալ, սակայն դրա լրամշակման գործընթացը շարունակվում է, ստեղծելով նոր չափումներ և մոտեցումներ:

Ներկայումս, երբ Եվրահանձնաժողովի և ՄՕՏՀ-ի կողմից արդեն հաստատված են համապատասխանաբար „Black Sea Synergy – A New Regional Cooperation Initiative” և „BSEC-EU Interaction: The BSEC Approach” փաստաթղթերը, կարելի է արձանագրել, որ ԵՄ-ՄՕՏՀ համագործակցությունը ընդհանուր առմամբ սկիզբ է առել, սակայն ոչ լիարժեք ձևաչափով: ՄՕՏՀ-ԵՄ կապերի ամրապնդումը կարևորվել է նաև 2002թ. և 2007թ. ՄՕՏՀ հոբելյանական գագաթնաժողովների ընդունված հռչակագրի դրույթներում: Բայց պետք է խոստովանել, որ մենք ճանապարհի սկզբում ենք և դեռևս ընդհանուր հայեցակարգի քննարկման փուլում: Հուսով ենք, որ փետրվարի 14-ին Կիևում կայանալիք ՄՕՏՀ-ԵՄ Արտգործնախարարների համատեղ հանդիպումը կնշանագծի իրատեսական և գործնական ուղի երկու կազմակերպությունների համագործակցության համար:

Հատկապես կցանկանայի ընդգծել հետևյալը՝ ՄՕՏՀ ինստիտուցիոնալ, իրավական, կառուցվածքային առումներով ժամանակի ընթացքում կատարելագործված կազմակերպություն է և կարող է ծառայել որպես լուրջ գործիք սևծովյան տարածաշրջանում կայունության և տնտեսական համագործակցության համար: Չբացառելով նոր սևծովյան նախաձեռնությունների ստեղծման հնարավորությունը, կարծում եմ, պետք է

արդյունավետ կերպով օգտագործել արդեն կայացածը, փորձարկվածը, այն օժտելով ֆինանսական, բովանդակային, հաղորդակցային նոր կարողություններով՝ ի շահ մեր համատեղ անվտանգության և բարօրության:

Վերջում կցանկանայի նշել, որ Հայաստանը այս տարի նոյեմբերի մեկից նախագահելու է ՄՕՏՀ կազմակերպությունում և մենք կփորձենք նոր լիցք հաղորդել այս կազմակերպությանը և նրա կապերին այլ միջազգային կառույցների հետ: Մենք պետք է հենվենք ոչ թե մեզ բաժանող, այլ միավորող արժեքների վրա և գտնենք շահերի ընդհանուր հարթակ՝ ցնցումներից և ճգնաժամներից խուսափելու համար:

Շնորհակալություն ուշադրության համար: